

2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պ-րն՝ Գոռ Հովհաննիսյան

Մրգաստան համայնքի հարգելի բնակիչներ, հյուրեր, ավագանու անդամներ, Ձեր քննարկմանն են ներկայացնում Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2013թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Քանի որ, բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը, ուստի ինձ համար խիստ կարևոր է Ձեր կարծիքը բյուջեի գործընթացի մասին: Դա հնարավորություն կտա ծանոթանալ բնակչության հոգսերին, մտահոգություններին, լսել գնահատականներ կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

Կփորձեմ ըստ ուղղությունների ներկայացնել բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունը, ինչպես նաև աշխատակազմի կատարած աշխատանքները:

Մրգաստան համայնքի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 13 աշխատողներից, որից 6-ը հանրային ծառայողներ են, 2-ը հայեցողական պաշտոն է, 5-ը տեխնիկական սպասարկման անձնակազմ:

2013թ. դուտացիան կազմել է՝ 18 333 500 դրամ:

Համայնքի հողային տարածքը կազմում է՝ 280հա., որից 138.99հա. վարելահող, այգիները կազմում են 5.4հա.:

Գյուղը ունի մեկ միջնակարգ դպրոց:

Գյուղացիների հիմնական զբաղմունքը՝ հողագործությունը և անասնապահությունն է:

2012թ. դեկտեմբերի 12-ի, թիվ 1/1 արտահերթ նիստի, թիվ 17-Ն որոշմամբ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 3-րդ կետով, և 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների ընդունվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղական համայնքի 2013թ. բյուջեն:

Բյուջեն կազմված է վարչական և ֆոնդային մասից:

Նախատեսված է՝

Եկամուտների գծով՝ 25259.1հազար դրամ:

Ծախսերի գծով՝ 25259.1հազար դրամ:

Դեֆիցիտը կազմել է՝ 0.0հազար դրամ:

Համայնքի ղեկավարը նշեց՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և Իրավական ակտերով, հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է պետության կողմից պատվիրակված և կանավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավիրվել և վարվել է ավագանու՝ 12 նիստ, որից 6 հերթական, 6 արտահերթ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է բյուջեի 5 փոփոխություն, որոնք օրենքով սահմանված կարգով ուղարկվել է Յ.Յ. Արդարադատության նախարարություն փորձաքննության և առաքվել է մարզպետարան համապատասխան ժամկետներում:

Իմ հանձնարարությամբ աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է գյուղապետարանի աշխատակազմի ամիսափան աշխատանքը: Մասնավորապես՝ նախապատրաստվել է համայնքի ավագանու նիստերի օրակարգը: Նիստում քննարկվող հարցերի նախագծերը, մեկ շաբաթ առաջ իրազեկվել է ավագանուն: Նշված հարցերի

օրակարգը և նրանում քննարկված հարցերը փակցված են եղել հայտարարությունների համար նախատեսված տեղերում, համայնքի բնակիչներին իրազեկելու նպատակով: Քարտուղարի կողմից նախապատրաստվել է և ժամանակին առաքվել է մարզպետարան ավագանու որոշումները, համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները:

Ժամանակին տրվել է պատասխան մարզպետարանից եկած գրություններին:

Անցկացվել է մեկ ատեստավորում, երեխայի երեք տարվա խնամքի համար, արձակուրդում գտնող համայնքային ծառայողի նկատմամբ, որը վերադարձել է աշխատանքի և ցանկություն է հայտնել ատեստավորվել:

Գ/Պ աշխատակազմի քարտուղարը՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող առաջին շաբաթվա ընթացքում, ներկայացրել է իր կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Կազմակերպվել է ընդունելություն՝ համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի և համայնքի ավագանու մուտ: Ընդունելության դիմած՝ 54 քաղաքացիներից 40-ի դիմումներին տրվել է սպառիչ պատասխան: Հիմնականում բնակչության դիմումները սոցիալական բնույթի են:

Համայնքի բնակչությանը տարվա ընթացքում տրվել է՝ 2 400 000 /երկու միլիոն չորս հարյուր հազար/ դրամի դրամական օգնություն:

Համայնքում 2013թ. ընթացքում 2 քաղամասերում արձանագրվել է հրդեհի դեպքեր: Այրվել է 1 վագոն տնակ և 1 բնակարան 50 տոկոսով: Առաջին դեպքում տրվել է դրամական օգնություն 60 000 /վաթսուց հազար/ դրամի չափով:

2-րդ ընտանիքին օգնությունը տրվում է փուլ առ փուլ, շինանյութի տեսքով: Ավագանու կողմից հատկացված 160 000 /հարյուր վաթսուց հազար/ դրամի չափով:

Ղեկավարվելով «ՏԻՍ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ: Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

Հողի հարկը տարվա կտրվածքով կազմում է՝ 4 500 000 /չորս միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ, հավաքագրվել է՝ 4 500 500 /չորս միլիոն հինգ հարյուր հազար հինգ հարյուր/ դրամ, կատարվել է 100 տոկոսով:

Գույքահարկ շենք շինությունների համար՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դիմաց հավաքագրվել է՝ 104 690 /հարյուր չորս հազար վեց հարյուր իննսուն/ դրամ 69.79 տոկոս:

Փոխադրամիջոցների համար՝ 1 000 000 /մեկ միլիոն/ դիմաց հավաքագրվել է՝ 875 400 /ութ հարյուր յոթանասուն հինգ հազար չորս հարյուր/ դրամ, 87.54 տոկոս:

Տեղական տուրքերի գծով՝ համայնքի տարածքում առևտրի կետերի, ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար, սահմանված 54 000 /հիսուն չորս հազար/ դիմաց հավաքագրվել է՝ 36 000 /երեսունվեց հազար/ դրամ, 66.67 տոկոս:

Ոչ հարկային եկամուտներ՝ 53 300 /հիսուն երեք հազար երեք հարյուր/ դիմաց հավաքագրվել է՝ 53 100 /հիսուն երեք հազար հարյուր/ դրամ, 99.6 տոկոս:

1. Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններ:

1/1. Տրվել է ֆինանսական օգնություն, մահացածների ընտանիքներին՝ 750 000 /յոթ հարյուր հիսուն հազար/ դրամի չափով:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝ կատարվել են հետևյալ աշխատանքները.

2/1 Համայնքում աղբահանությունը անցել է բնականոն վիճակի, շաբաթական երկու անգամ, կնքված պայմանագրի հիման վրա էջմիածնի քաղաքապետարանի բնակ-կոմունալ վարչությունը կատարում է կենցաղային աղբի տեղափոխություն:

Համայնքում ներդրվել է աղբահանության շնչահարկով հարկվող տեղական տուրքը, փաստացի բնակվող մեկ շնչին 50 դրամ վարձավճարով:

Աշխատանքները բնականոն ընթացքի մեջ են, հավաքագրվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 64 000 /վաթսուց չորս հազար/ դրամ:

3. Համայնքում գործող գերեզմանատան աշխատանքները իմ կողմից վերահսկվում են:

4. Սահմանված կարգով բնակչությանը իրազեկվել է ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների, կառուցապատման հետ կապված օրենսդրական փոփոխությունների մասին: Տրվել է մեկ շին. թույլտվություն և մեկ ճարտարապետաշինարարական առաջադրանք:

5. Հողօգտագործման բնագավառում՝ Իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Կատարվել է նաև հողաչափական աշխատանքներ, բնակիչների դիմումների հիման վրա:

6. Կրթության և մշակույթի բնագավառում իմ կողմից մշտական ուշադրության է արժանանում գյուղի միջնակարգ դպրոցը: Գյուղի դպրոցում իրականացվող միջոցառումները արժանանում է մեր աջակցությանը:

Այս տարի ավարտվեց դպրոցի լուկալ ջեռուցման համակարգի շինարարական աշխատանքները:

7. Իմ կողմից կազմվել և վավերացվել է 6 կտակ, մուծվել է տեղական տուրք 60 000 /վաթսուն հազար/ դրամ:

Կրթության բնագավառում համայնքի ղեկավարն իրականացրել է պարտադիր լիազորություններ, աջակցվել է հանրակրթական դպրոցի գործունեությանը, մասնավորապես.

1. Հունվարի 28-ի «Բանակի օրվան» նվիրված միջոցառումներ, փետրվարի 21-ին «Մայրենի լեզվի» օրվան նվիրված միջոցառումներ:

Մարտի 8-ի տոնակատարությունը նվիրված «մայրության և գեղեցկության տոնին» համայնքում նշելը դարձել է ավանդույթ: Այդ օրը համայնքաբնակ կանանց, ինչպես նաև դպրոցի ուսուցչական կոլեկտիվին, բուժ. աշխատողներին, գյուղապետարանի կին աշխատողներին նվիրվել է արժեքավոր նվերներ և ծաղիկներ, կազմակերպվել է միջոցառում:

Կազմակերպվել է՝ մայիսի 9-ի «Հաղթանակի և խաղաղության տոնի» և մայիսի 28-ին «Հանրապետության օրվան» նվիրված միջոցառում:

Մեր կողմից «Գիտելիքի օրվան» նվիրված միջոցառման ժամանակ դպրոց հաճախող առաջին դասարանցիներին տրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ, մեր մասնակցությունն ենք ցուցաբերել կազմակերպված միջոցառմանը:

Մեր կողմից կազմակերպվել է «Ամանորի և սուրբ ծննդյան» տոներին նվիրված միջոցառումներ, որի ժամանակ համայնքի 0-14 տարեկան երեխաներին տրվել է ամանորյա տոպրակներ և արժեքավոր նվերներ:

Ամանորյա տոների ընթացքում համայնքի կենտրոնական փողոցը և հուշարձանի տարածքը զարդարվել է, տեղադրվել է տոնածառ:

Համայնքում իրականացվել է գյուղ մտնող ճանապարհի ծյունամաքրման աշխատանքներ:

8. Գյուղատնտեսության բնագավառում՝ աջակցում ենք գյուղացուն գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման գործում: Սկսել ենք պարարտանյութի համար հերթագրման աշխատանքները մեկ պարկը՝ 6000/վեց հազար/ դրամ արժողությամբ:

Սերմացու /գարի, առվույտ,/ և դիզվառելիքի ձեռք բերման համար: Գյուղապետարանի ամենօրյա հսկողության տակ է գտնվում գյուղի հուշարձանը, որի տարածքը խնամվում և պահպանվում է սեզոնային աշխատակցի կողմից:

Համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ, գյուղի հուշարձանը ամրագրվել է միջնակարգ դպրոցին և այսուհետ դպրոցի աշակերտները և ուսուցչական կոլեկտիվը ևս ներգրավվել է հուշարձանի պահպանման և խնամման գործին:

Գյուղում գործում է բուժկետ, 2 բուժաշխատողով:

Համայնքում գործում է «սուրբ Հովհաննես» եկեղեցին, որտեղ ամեն կիրակի տեղի է ունենում ժամերգություն, որին ակտիվ մասնակցությունն են ունենում միջնակարգ դպրոցի սաները և համայնքի բնակիչները:

Համայնքում առկա են հիմնախնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծում:

Համայնքը չունի նախադպրոցական հիմնարկ /մանկապարտեզ/:

Համայնքի փողոցները գտնվում են անմխիթար վիճակում:

Համայնքում չկա քաղաքային տրանսպորտի միջոց:

Դեռևս համայնքում կան անտուններ, որոնք բնակվում են վագոն տնակներում:

Համայնքը չունի մարզադպրոց, չկան հանգիստ անցկացնելու համար ոչ մի հնարավորություն:

Մշակույթի տունը վթարային է: Սենյակները ունեն վերանորոգման կարիք:

Գյուղապետարանի գրադարանը տեղադրել ենք միջանցքում:

Համայնքին անհրաժեշտ է ծեռք բերել գյուղ. տեխնիկա, որի համար բազմիցս դիմել ենք տարբեր ատյաններ, սակայն մինչև օրս ոչ մի դրական պատասխան չենք ստացել: Անհանգստանալու կարիք կա, որովհետև մոտենում է գարնանային գյուղատնտեսական աշխատանքները, որոնք անհրաժեշտ է կազմակերպել: Դրանք հիմնախնդիրներ են, որոնք ունեն հրատապ լուծման կարիք:

2013թ. դեկտեմբերին, իմ կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը անցկացրեց գույքագրում, որի փաստաթղթերը պատրաստվում ենք ներկայացնել ավագանու առաջին նիստի հաստատմանը:

Իմ ելույթում ես նշեցի համայնքում առկա խնդիրները և կատարված աշխատանքները:

Գ. Գ. ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐ  Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ